# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԱՌՆՈՒՏԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ 0,5 ԴՐՈՒՅՔ, ՄԵԹՈԴԻՍՏԻ/ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ/, ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՐԱՀԱՆԳՉԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Կառնուտի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության **1.հոգեբան** 0.5 դրույք /66000 ՀՀ դրամ աշխատավարձ/: | 1)**Որակավորման պահանջները**<br>1.Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանը պետք է ունենա՝ բարձրագույն մասնագիտական կրթություն:<br>1) **Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոն զբաղեցնողը պետք է իմանա,տիրապետի<br>ա/ «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Լիցենզավորման մասին» «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները.<br>բ/ նախադպրոցական կրթական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր.<br>գ/ ընդհանուր և մանկավարժական հոգեբանություն, ընդհանուր մանկավարժության,անձի և դիֆերենցիալ հոգեբանության, տարիքային և մանկան հոգեբանության,սոցիալական հոգեբանության հիմունքները: | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,<br>2)դատական կարգով զրկվել է մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը,<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)դիմում (Ձև1)<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ<br>4)աշխատանքային ստաժի մասին տեղեկանք/առկայության դեպքում/<br>5)ինքնակենսագրություն (ձև4)<br>6) մեկ լուսանկար՝ 3×4 չափի<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,<br>8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,<br>9)հրատարակված հոդվածների ցանկ կամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | դ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին: | | գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |
| | | Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները: | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| | 2.**Մեթոդիստի (ուսումնական գծով տնօրենի տեղակալ)**<br>-0.25 դրույք /33000 ՀՀ դրամ աշխատավարձ)<br>3. **Ֆիզկուլտուրայի հրահանգիչ**<br>0.25 դրույք /33000 ՀՀ դրամ աշխատավարձ) | 2.Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը ուսումնական գծով տնօրենի տեղակալ պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>3.Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն` նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ,<br>2) **Ընդհանրական պահանջները** | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի /տնօրենի ուսումնական գծով տեղակալը/ պաշտոնը զբաղեցնողը պետք է իմանա պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները:<br>**Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:** | | |
| | 3. **Ֆիզկուլտուրայի հրահանգիչ**<br>0.25 դրույք /33000 ՀՀ դրամ աշխատավարձ) | **3. Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պահպանման կանոնները: | | |
| 2 | Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը<br>Վայրը՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի Կառնուտ բնակավայր,10/1 փողոց,<br>Օրը՝ 2026 թվականի հուլիսի 30-ին,<br>ժամը՝12:00 | Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները: | | Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները |
| | | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի «Կառնուտի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ<br>Հեռ.077 840 730<br>Հարցաշարերը ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբերի 2024 թվականի N1981-Ա/2 հրաման:<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի | | 2026 թվականի հունիսի 30-ից հուլիսի 27-ը ներառյալ |
| | | Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978:<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:<br>Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել akhuryan.am կայքերում: | | |